Կարծիք

Նինել Սարգսյանի՝ «Արմեն Մարտիրոսյանի բանաստեղծական աշխարհը» վերնագրով թեկնածուական ատենախոսության մասին

Անցյալ դարի 60-ական թվականների վերջերին գրական ասպարեզ իջավ բանաստեղծական մի սերունդ, որն իր վրա սևեռեց ինչպես գրաքննադատության, այնպես էլ՝ ընթերցող լայն շրջանների ուշադրությունը: Հետսևակյան շրջանի հայ պոեզիան մտել էր պատմական նոր ժամանակաշրջան՝ հավակնելով ստեղծել հոգևոր-մշակութային նոր արժեհամակարգ, գեղագիտական նոր սկզբունքներ ու մեթոդներ, որոնք թե՛ ձևի և թե՛ բովանդակության առումով այլևս անհանդուրժող էին գեղարվեստի ավանդական ընկալումներին և հակված է նորարարական ձևերին ու մտածողությանը՝ վերջիններիս հիմքում տեսնելով նոր մարդուն և նրա հոգևոր նոր պահանջները: Տասնամյակների ընթացքում արդի հայ պոեզիան ունեցավ զարգացման տարբեր ուղղություններ, որակական տարբեր հարթություններում ձեռք բերեց գաղափարագեղագիտական և կառուցվածքային մի շարք առանձնահատկություններ արդեն իսկ մի քանի սերունդների երկերում հատկանշելով տարբեր արտահայտչաեղանակներով, զարգացման մեթոդներով ու տիպաբանությամբ:

Վերոհիշյալ սերնդի երևելի ներկայացուցիչներից է Արմեն Մարտիրոսյանը, ու չափածո ստեղծագործություններին էլ նվիրված է Նինել Սարգսյանի ներկա ուսումնասիրությունը:

Պետք է ասել, որ ընդհանրության մեջ, աշխատանքն արժևորվում է նաև այն առումով, որ, առաջին անգամ, փորձ է արվում առանձին ուսումնասիրությամբ քննության առնել Ա. Մարտիրոսյանի բանաստեղծական աշխարհը և նրա ստեղծագործական հասունացման ու աշխարհայացքի ընդլայնման գործընթացը դիտել զարգացման շղթայական համակարգի մեջ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից և եզրակացությունից, որոնց տրամաբանական կապն ապահովում է Մարտիրոսյանի

ստեղծագործական վերընթաց զարգացումն աստիճանակարգելու ատենախոսի գրականագիտական սկզբունքը:

Առաջին գլխում («Որոնումների առաջին հանգրվանում») հեղինակն անդրադարձել է բանաստեղծի՝ 1960-80-ական թվականներին գրված ստեղծագործություններին, որոնք տեղ են գտել նրա առաջին երեք ժողովածուներում:

Այստեղ ատենախոսը նախ քննության է առել հոգևոր-մշակութային նոր արժեհամակարգին նախորդած հասարակական-քաղաքական, սոցիալ-պատմական ժամանակաշրջանը՝ գրապատմական զարգացման ընդհանուր շղթայակարգի մեջ փորձելով ճանաչել նոր մարդուն ու նրանով պայմանավորված բանաստեղծական նոր մտածողությունը:

Հենց այդ նոր մտածողությունը և առհասարակ, հոգևոր-մշակութային արժեքների որակափոխումը հիմնականում պայմանանվորված էր 20-րդ դարի հասարակական-քաղաքական տարաբնույթ իրադարձությունների, տեխնիկական և տեղեկատվական աննախադեպ առաջընթացի և դրանց հետևանքով՝ մարդու նոր հոգեբանության ձևավորման գործընթացներով: Պոեզիայի համար, փաստորեն, եկել էր մի ժամանակաշրջան՝ վերանայելու անցյալի արժեքները, համակարգելու չափանիշները և ուրվագծելու հոգևոր նոր իրականության սլաքի ուղղությունը, որը, դատելով գեղարվեստի զարգացման համընդհանուր միտումներից, մարդու ինքնըմբռնման նոր ձևաչափն է՝ արտահայտված գեղարվեստական նոր սկզբունքներով, եղանակներով ու մեթոդաբանությամբ:

Աշխատանքի այս գլխում հեղինակն անդրադարձել է բանաստեղծի ստեղծագործության գրապատմական ակունքներին՝ նրա պոետական կերպարի ձևավորման հիմքում իրավացիորեն տեսնելով ինչպես հայ բազմադարյա բանաստեղծության հեռավոր անցյալը, այնպես էլ՝ արևմտաեվրոպական գեղագիտական մտքի ազդեցությունները, որոնց աստիճանական հաղթահարումն ակնհայտ է դառնում «Բանաստեղծություններ», «Թռչուններ», «Մեր սիրո երկիրը» ժողովածուների գիտական բավարար վերլուծություններում:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ, ինչպես այս, այնպես էլ հաջորդող երկու գլուխներում Ն. Սարգսյանն անդրադառնում է բանաստեղծի և, առհասարակ, սերնդի բանաստեղծական աշխարհայացքի ձևավորման և զարգացման վերաբերյալ մի շարք գրականագետների դիտարկումներին, երբեմն և մասամբ իրավացիորեն բանավեճի մեջ մտնում վերջիններիս հետ, ինչը վկայում է ատենախոսության հեղինակի՝ նյութը պատշաճ մակարդակով ուսումնասիրելու և գրաքննադատական հայացքները համակարգելու մասնագիտական ունակության մասին:

Երկրորդ գլխում («Ժամանակը բոլոր չափումներով») ատենախոսը հիմնականում դիտարկել է Ա. Մարտիրոսյանի՝ տասնամյակների ընթացքում բանաստեղծական մտածողության և, առհասարակ, գեղագիտական արժեհամակարգի որակափոխման օրինաչափություններն ու սկզբունքները, ընդգծել արևմտաեվրոպական և հայ դասական պոեզիայի հետ ունեցած նրա հոգևոր առնչությունները, ստեղծագործական տարբեր հարթություններում դրանց արտահայտման տիպաբանական առանձնահատկությունները:

Ուսումնասիրության հիմք ունենալով Ա. Մարիրոսյանի բանաստեղծական հասունացման նոր փուլը՝ ատենախոսն այստեղ վերլուծության է ենթարկում պրագմատիկ աշխարհի բարդ ու հակասական հարաբերություններում մարդու ընկալման ձևախեղումն ու դրանց դրդապատճառները, որոնք ինքնին ենթադրել են տալիս գեղագիտական արժեքների համընդհանուր որակափոխության, այստեղից նաև՝ լեզվական գործառույթների իմաստային ընդլայնում, ինչի արդյունքում և, առաջին շրջանի ստեղծագործությունների համեմատ, Ա. Մարտիրոսյանի պոեզիան, համաձայն Ն. Սարգյանի գիտական ընդհանրացումների, ձեռք է բերում սոցիալ-հոգեբանական ներհակ ուղղվածություն՝ իրականության արացոլման բազմահամակարգ տիրույթներ: Այս գլխում հեղինակն իրավացիորեն անդրադարձել է նաև Մարտիրոսյանի մանկական ստեղծագործություններին, որոնք յուրովի համալրում են նրա բանաստեղծական աշխարհը:

Նորօրյա մտածողությամբ մարդու հոգեբանությունը կարող էր արտահայտվել միմիայն նոր լեզվամտածողությամբ, որն էլ, իր հերթին, կարող էր հնարավոր դառնալ բանաստեղծության կառուցվածքային ներքին տարրերի շերտավորման նոր սկզբունքների ու եղանակների, բառիմաստային փոխանցումների և գեղարվեստական հնարքների կիրառման նոր ձևերի ու մեխանիզմների առկայության շնորհիվ, ինչը և դարձավ Ա. Մարտիրոսյանի ստեղծագործության առանցքային խնդիրներից մեկը՝ ուսումնասիրության առարկա դառնալով խնդիր առարկա ատենախոսության երրորդ՝ «Բառը գույնի, լույսի, հավատի ու սիրո համապատկերում (պոետիկայի հարցեր)» վերնագրով գլխի համար, որտեղ Ն. Սարգսյանը դրսևորել է գեղարվեստական տեքստի ներքին հարաբերություններում ենթաբնագրի ընթերցման բավարար կարողություններ:

Ընդհանրացնելով ասվածը՝ պետք է նշել, որ ներկա ատենախոսությունն ընդհանրության մեջ երևելի մի փորձ է՝ վերստին անդրադառնալու և արժևորելու արդի հայ պոեզիան, այդ համատեքստում՝ Ա. Մարտիրոսյանի պոետական բազմերանգ աշխարհը, որը, ինչպես նշվեց վերևում, առաջին անգամ քննության է ենթարկվում գրաեղանագիտական առանձին ուսումնասիրությամբ:

Այսքանով հանդերձ, սակայն, աշխատանքը զերծ չէ նաև թերություններից: Առաջին հերթին կուզենայինք նկատել, որ թեմայի և բոլոր երեք գլուխների վերնագրերը կարելի էր մասնակիորեն խմբագրել՝ նրանց գրաքննադատական նորօրյա մտածողությանը համահունչ գիտական տեսք հաղորդելու համար: Ատենախոսության առանցքային հատվածներում բանաստեղծական մեջբերումներին որոշ տեղերում հաջորդում են տեքստի բովանդակության վերապատմողական եղանակներն ու մեթոդները, որոնք, գիտական բանաձևերում ընդհանրացվելու և համակարգվելու դեպքում, անշուշտ, ատենախոսությունն առավել կշահեր իր ամբողջության մեջ: Բանաստեղծի ստեղծագործության գրապատմական ակունքներում ատենախոսն իրավամբ առնչություններ է տեսնում ինչպես միջնադարյան, այնպես էլ հայ նորագույն գրականության և արևմտաեվրոպական գեղագիտական մտքի հետ, ինչը, սակայն, ոչ բոլոր

անհրաժեշտ դեպքերում է ուղեկցվում բնագրային համեմատություններով և զուգահեռներով: Ցանկալի կլիներ նաև, որ, հատկապես տեսական ընդհանրացումներում, հեղինակն առավել ուշադրություն դարձներ ձևակերպումների շատ ավելի կուռ և հերմետիկ մեթոդաբանությանը, ինչի առկայության դեպքում ուսումնասիրությունը կարող էր լինել առավել գիտահամակարգված:

Նկատված թերությունները, այնուամենայնիվ, չեն կարող արժեզրկել խնդրո առարկա ատենախոսությունը, քանի որ իր ամբողջության մեջ այն բավարարում է ներկայացվող պահանջները, կարևոր բացահայտումներ անում Ա. Մարտիրոսյանի պոեզիային, ինչպես նաև արդի հայ բանաստեղծական մտքի վերաբերյալ, ինչը և հիմք ընդունելով՝ նպատակահարմար ենք գտնում միջնորդել՝ Նինել Սարգսյանին շնորհելու իր հայցած՝ Ժ.01,02 «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ընդդիմախոս՝ բ.գ.դ. պրոֆ. Հ.Գ. Մուսայելյան

Բ.գ.դ., պրոֆեսոր Հ. Գ. Մուսայելյանի ատենախոսությունը հասարակ է:

06.11.2021թ.